

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ**

ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՄԲՈՆ

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝

1907/M 13. «Աշխատանքային վեճեր»

**Որակավորման
աստիճան՝**

մագիստրատուրայի կրթական ծրագիր

Կազմել է՝

իրավ. գիտ. թեկն., դոց. **Գ.Վ. Պետրոսյանը**

ԵՊՀ հրատարակչություն

ԵՐԵՎԱՆ – 2015

ԾՐԱԳՐԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1907/M13. «Աշխատանքային վեճեր» – (3 կրեդիտ)

3-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Շաբաթական 2 ժամ (դասախոսություն 32, ինքնուրույն աշխատանք՝ 58 ժամ),

Նպատակը.

Դասընթացի նպատակն է՝ մագիստրատուրայի ուսանողներին ծանոթացնել Հայաստանի Հանրապետությունում աշխատանքային հարաբերություններ կարգավորող օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի, ինչպես նաև աշխատանքային և կոլեկտիվ պայմանագրերի դրույթների իրական կամ ենթադրյալ խախտումների շուրջ աշխատանքային իրավահարաբերության մասնակիցների միջև առաջացող տարաձայնությունների (վեճերի) քննարկման, լուծման, ինչպես նաև դրանց վերաբերյալ իրավասու մարմինների կայացրած որոշումների կատարման հետ կապված խնդիրներին և այդ հարաբերությունները կարգավորող նորմատիվ ակտերին և վերջիններիս կիրառման պրակտիկային:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը՝

Կունենա գիտելիք և իմացություն

▪ Աշխատանքային վեճերի կանխման կազմակերպահրավական միջոցառումների վերաբերյալ.

▪ Հայաստանի Հանրապետությունում աշխատանքային վեճերի քննարկման ու լուծման, ինչպես նաև դրանց արդյունքում ընդունվող դատական ակտերի կատարման գործընթացը կարգավորող օրենսդրության վերաբերյալ.

▪ Ճախադատական կարգով աշխատանքային տարաձայնությունների հարթման կազմակերպահրավական հնարքների վերաբերյալ.

▪ աշխատանքային տարաձայնությունները դատարանի քննարկմանը հանձնելու համար անհրաժեշտ իրավաբանական գործողությունների իրականացման, ներառյալ՝ նաև օրենքով դրանց համար սահմանված իրավաչափության պայմանների վերաբերյալ.

▪ աշխատանքային վեճերի կողմերի դատավարական իրավունքների, պարտականությունների, դրանց ոչ պատշաճ կատարման կամ իրականացման իրավական հետևանքների վերաբերյալ.

▪ աշխատանքային վեճի կողմերի լիազորված ներկայացուցիչների դատավարական կարգավիճակի վերաբերյալ.

▪ Վարչական վարույթն իրականացնող մարմնի ու դրա պաշտոնատար անձանց գործողությունների ու որոշումների բողոքարկման կարգի ու պայմանների վերաբերյալ.

▪ Կատարողական վարույթի բովանդակության, ներառյալ՝ նաև աշխատանքային վեճերով իրականացվող գործողությունների ու որոշումների ի կատար ածման ու բողոքարկման կարգի վերաբերյալ.

Ուսանողն ունակ կլիմի (բուն մասնագիտական կարողություններ)

▪ Կազմել աշխատողի կողմից իր աշխատանքային իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու նպատակով արհեստակցական միություններին ներկայացվող դիմում, աշխատանքային օրենսդրության պահանջները գործատուի կողմից խախտվելու կապակցությամբ պետական հսկողություն և վերահսկողություն իրականացնող մարմիններին ներկայացվող դիմում-բողոք, վարչական և կատարողական վարույթների արդյունքում ընդունվող որոշումները դատարան բողոքարկելու մասին հայցադիմում, այլ հայցադիմումներ, դրանց պատասխաններ, վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ, ինչպես նաև աշխատանքային վեճերի քննարկման ընթացքում շրջանառվող դատավարական այլ փաստաթղթեր:

Գիտելիքների ստուգման ձևերը, մեթոդները և գնահատման չափանիշները

Նախատեսված են 2 ընթացիկ՝ մեկ բանավոր և մեկ գրավոր քննություններ, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 4 միավոր:

Առաջին ընթացիկ քննության արդյունքներով ստուգվում է ծրագրի 1-ին և 2-րդ, իսկ երկրորդ քննության ժամանակ՝ 3-րդ և 4-րդ թեմաներում ներառված հարցերի իմացությունը:

Քննական տոմսը պարունակում է 2 խնդիր-առաջադրանք՝ առավելագույնը 1 միավոր գնահատմամբ: Թերի կամ ոչ լրիվ պատճառաբանված պատասխանը (չարադրանքը) գնահատվում է 0.5, իսկ սխալ, խիստ թերի կամ չպատճառաբանվածը՝ 0 միավոր:

Եզրափակիչ քննություն

Դասընթացն ավարտվում է եզրափակիչ բանավոր քննությամբ՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Ուսանողին տրվող քննական հարցատոմսը պարունակում է 2 գործնական առաջադրանք, որոնցից յուրաքանչյուրի առավելագույն արժեքը 5 միավոր է: Միավորների քայլը 1-ն է:

Պատասխանը նախապատրաստելու համար ուսանողին տրամադրվում է 80 րոպե:

Ուսանողի միավորի արժեքը կախված է պատասխանի խորությունից, մասնավորապես՝ տեսության, համապատասխան օրենսդրության և դատական ո վարչական պրակտիկայի իմացության ու տիրապետման աստիճանից:

Վերջնական գնահատականը որոշվում է բոլոր հարցերի համար շնորհված միավորների հանրագումարով:

ԹԵՄԱ 1.

Աշխատանքային վեճի հասկացությունը և տեսակները

(դասախոսություն 4 ժամ)

1. Աշխատանքային վեճի հասկացությունը, էությունը. ծագման պատճառները:
2. Աշխատանքային վեճերի տեսակները:

Չարդեր 1-2 – Ներածական դասախոսություն: Աշխատանքային իրավահարաբերություններ ծագելու կամ դրանց ծագման ուղղությամբ անհրաժեշտ իրավաբանական գործողությունները (ծագման հիմքերը) բացատրելուց հետո հանձնարարվում է ընթերցել նորմատիվ իրավական ակտերի համապատասխան դրույթները: Ուսանողները ծանոթացվում են աշխատանքային տարածայնությունների առաջացման պատճառներին, նպաստող պայմաններին, նրանց մեկնաբանվում է տարածայնությունն աշխատանքային վեճի վերածվելու կամ այն կանխելու նախադրյալները: Ներկայացվում է աշխատանքային վեճերի դասակարգումը (տեսական և օրենսդրական բաժանումը), հակիրճ իրազեկում տրվում կարգավորող օրենսդրական նորմերի, այդ գործընթացներում կողմերի իրավունքների պաշտպանության երաշխիքների մասին:

ԹԵՄԱ 2.

Կոլեկտիվ աշխատանքային վեճեր

(դասախոսություն 6 ժամ)

1. Կոլեկտիվ տարածայնությունների էությունը և առաջացման պատճառները
2. Կոլեկտիվ աշխատանքային վեճերի լուծման մինչդատական արարողակարգերը
3. Կոլեկտիվ աշխատանքային վեճերի լուծումը դատական կարգով
4. Գործադուլ

Չարդեր 1-4 – Դասախոսություն, որի ընթացքում քննարկվում է ուսանողներին նախապես հանձնարարված նյութը, մեկնաբանվում են կոլեկտիվ վեճերի ծագման նախադրյալները, մեկնաբանվում են հաշտարար

(մինչդատական) և դատական արարողակարգերը, բացատրվում են աշխատանքային վեճերի լուծման ծայրահեղ միջոցի՝ գործադուլի իրավունքի էությունը, գործադուլ կազմակերպելու և անցկացնելու կարգը, գործադուլավորների երաշխիքներն ու պատասխանատվության վերաբերյալ հարցերը:

ԹԵՄԱ 3.

Անհատական աշխատանքային վեճեր

(դասախոսություն 8 ժամ)

1. Անհատական աշխատանքային վեճերի դասակարգումը
2. Անհատական աշխատանքային տարածայնությունների մինչդատական լուծումը
3. Անհատական աշխատանքային վեճերի ընդդատությունը և քննարկման ընդհանուր կանոնները
4. Հաշտարարությունն աշխատանքային վեճեր քննելիս
5. Աշխատանքային վեճերով ապացուցման պարտականությունը բաշխելու առանձնահատկությունները

Հարցեր 1-5 – *Դասախոսություն, որին ուսանողները ներկայանում են նախապես հանձնարարված նյութն ուսումնասիրած: Նախևառաջ, նրանց բացատրվում է աշխատանքային տարածայնություններն առանց պետական իրավասու մարմինների միջամտության լուծելու առավելությունները, ապա նաև դատարանում հաշտարար արարողակարգով քննարկման կարգն ու առանձնահատկությունները: Ուսանողներին ներկայացվում է աշխատանքային իրավունքների պաշտպանության նպատակով դատարան ներկայացվող հայցադիմումի օրինակելի ձև, բացատրվում է հայցադիմումի բովանդակությունը շարադրելու առանձնահատկությունները՝ ելնելով հայցապահանջի էությունից, տրամադրվում է հայցադիմումի պատասխանի օրինակելի ձև, քննարկվում է հայցի դեմ առարկություններ ներկայացնելու կարգը, փաստարկները շարադրելու հմտությունները: Բացատրվում են նաև աշխատանքային վեճը վարչական դատարանում և արբիտրաժային տրիբունալում լուծելու հիմքերը, կարգը և առանձնահատկությունները, մանրամասն քննարկվում է աշխատանքային վեճերով ապացուցման պարտականությունը բաշխելու առանձնահատկությունները, բացատրվում դրա նշանակությունը ցանկացած աշխատանքային վեճի ճիշտ լուծման*

գործում:

ԹԵՄԱ 4.

Աշխատանքային վեճերով կայացված որոշումների կատարումը: Դատական ատերի հարկադիր կատարումը

(դասախոսություն 8 ժամ)

1. Աշխատանքային վեճերով կայացվող դատական ակտերը
2. Դատական ակտերի բողոքարկումը վերաքննության կարգով
3. Դատական ակտերի բողոքարկումը վճռաբեկության կարգով
4. Դատական ակտերի հարկադիր կատարումը: Կատարողական վարույթ

Հարցեր 1-4 – *Դասախոսություն, որի ընթացքում խոսվում է աշխատանքային վեճերով կայացվող դատական ակտերի տեսակների մասին: Դասախոսության ընթացքում ուսանողները ներկայանում են նախապես հանձնարարված նյութն ուսումնասիրած: Նրանց տրամադրվում է գործն ըստ էության լուծող և գործն ըստ էության չլուծող դատական ակտերի օրինակներ, բացատրվում է վճռի կառուցվածքը, տրամադրվում է վերաքննիչ բողոքի, դրա պատասխանի, վճռաբեկ բողոքի ու դրա պատասխանի օրինակելի ձև, բացատրվում են աշխատանքային վեճերով կատարողական վարույթի հարոցման հիմքերը, հիմնական կատարողական գործողություններն ու դրանց բողոքարկման հիմքերն ու կարգը, խոսվում է դատական ակտերը չկատարելու իրավական հետևանքների մասին:*

ԵԶՐԱՓՈՎԿԻՉ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԱՑԱՆԿ

1. Աշխատանքային վեճի հասկացությունը, էությունը. ծագման պատճառները
2. Աշխատանքային վեճերի տեսակները
3. Կոլեկտիվ տարաձայնությունների էությունը և առաջացման պատճառները
4. Կոլեկտիվ աշխատանքային վեճերի լուծման մինչդատական արարողակարգերը
5. Կոլեկտիվ աշխատանքային վեճերի լուծումը դատական կարգով
6. Գործադուլ

7. Անհատական աշխատանքային վեճերի դասակարգումը
8. Անհատական աշխատանքային տարածայնությունների մինչդատական լուծումը:
9. Անհատական աշխատանքային վեճերի ընդդատությունը և քննարկման ընդհանուր կանոնները:
10. Հաշտարարությունն աշխատանքային վեճեր քննելիս:
11. Աշխատանքային վեճերով ապացուցման պարտականությունը բաշխելու առանձնահատկությունները:
12. Աշխատանքային վեճերով կայացվող դատական ակտերը
13. Դատական ակտերի բողոքարկումը վերաքննության կարգով:
14. Դատական ակտերի բողոքարկումը վճռաբեկության կարգով:
15. Դատական ակտերի հարկադիր կատարումը: Կատարողական վարույթ:
16. Կազմել աշխատանքային տարածայնությունը քննարկելու առաջարկություն.
17. Կազմել հաշտության համաձայնություն:
18. Կազմել հայցադիմում և հայցադիմումի պատասխան:
19. Կազմել վերաքննիչ բողոք և վերաքննիչ բողոքի պատասխան:
20. Կազմել վճռաբեկ բողոք և վճռաբեկ բողոքի պատասխան:

Իրավական ակտեր և պարտադիր գրականություն

1. ՀՀ Սահմանադրություն:
2. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր:
3. Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների Միջազգային Դաշնագիր:
4. Վերանայված Եվրոպական սոցիալական խարտիա:
5. «Հարկադիր կամ պարտադիր աշխատանքի մասին» ԱՄԿ Կոնվենցիան (ընդունվել է 1930 թվականի հունիսի 28-ին, վավերացվել 2004 թվականի հոկտեմբերի 25-ին):
6. ՀՀ Աշխատանքային օրենսգիրք:
7. ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք:
8. ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգիրք:
9. ՀՀ Վարչակա դատավարության օրենսգիրք:
10. ՀՀ Քրեական դատավարության օրենսգիրք:
11. ՀՀ Քրեական օրենսգիրք:
12. Վարչական Իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք:
13. ՀՀ Դատական օրենսգիրք:

14. «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք:
15. «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների նպաստների մասին» ՀՀ օրենք (2010):
16. «Փաստաբանության մասին» ՀՀ օրենք:
17. «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք:
18. «Անհատական տվյալների մասին» ՀՀ օրենք:
19. «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք:
20. ՀՀ Կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի «Առանձին կատեգորիայի աշխատողների՝ օրական 24 ժամ աշխատաժամանակի տևողությամբ պայմանավորված աշխատանքների ցանկը սահմանելու մասին» թիվ 1223-Ն որոշումը:
21. ՀՀ Կառավարության 2005 թվականի օգոստոսի 25-ի «Աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագրի վարման կարգը և ձևը սահմանելու մասին» թիվ 1471-Ն որոշումը:
22. ՀՀ Կառավարության 2006 թվականի հունիսի 16-ի «Աշխատանքային գրքույկի ձևը, աշխատանքային գրքույկ վարելու և կրկնօրինակ տրամադրելու կարգը սահմանելու մասին» թիվ 876-Ն որոշումը:
23. ՀՀ Կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի «Ամենամյա լրացուցիչ արձակուրդի իրավունք ունեցող առանձին կատեգորիայի աշխատողների ցանկը, այդ արձակուրդի նվազագույն տևողությունը և տրամադրման կարգը հաստատելու մասին» N 1384-Ն որոշումը:
24. ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2012 թվականի հուլիսի 18-ի «Քաղաքացի Գալուստ Շիրինյանի դիմումի հիման վրա ՀՀ աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով» թիվ ՍԴՈ-1038 որոշումը:
25. ՀՀ Սահմանադրական դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 11-ի «ՀՀ Կառավարության դիմումի հիման վրա ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի և 114-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով» թիվ ՍԴՈ-991 որոշումը:
26. ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2014թ. դեկտեմբերի 26-ի «ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 226-րդ հոդվածի, ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ, 51-րդ, 53-րդ, 219-րդ և 221-րդ հոդվածների կիրառման վերաբերյալ» թիվ ՍԴ/0111/02/13 որոշումը:
27. ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2014թ. հուլիսի 18-ի «ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 38-րդ և 265-րդ հոդվածների, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 331-րդ, 335-րդ, 337-րդ և 340-րդ հոդվածների կիրառման վերաբերյալ» թիվ ԵՇԴ/0906/02/13 որոշումը:
28. ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2013թ. դեկտեմբերի 26-ի «ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 38-րդ, 113-րդ, 123-րդ, 198-րդ, 220-րդ,

- 222-րդ, 223-րդ, 224-րդ, 226-րդ և 265-րդ հոդվածների կիրառման վերաբերյալ» թիվ ԵԱԲԴ/1066/02/11 որոշումը
29. ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2013թ. հուլիսի 4-ի «ՀՀ Քաղաքացիական օրենսգրք 17-րդ, 1058-րդ հոդվածների, ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 213-րդ հոդվածի, ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ և 53-րդ հոդվածների կիրառման վերաբերյալ» թիվ ԵԿԴ/2600/02/10 որոշումը:
 30. ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2013թ. հուլիսի 4-ի «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 3-րդ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ և ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 264-րդ հոդվածների կիրառման վերաբերյալ» թիվ ՎԴ 2087/05/12 որոշումը:
 31. ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2012թ. դեկտեմբերի 25-ի «ՀՀ աշխատանքային օրենսգրքի 14-րդ և 102-րդ հոդվածների, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 4-րդ կետի, 298-րդ հոդվածի 1-ին կետի կիրառման վերաբերյալ» թիվ ԱՐԱԴ/0381 որոշումը:
 32. ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2012թ. դեկտեմբերի 25-ի «ՀՀ աշխատանքային օրենսգրքի 14-րդ և 102-րդ հոդվածների, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 4-րդ կետի, 298-րդ հոդվածի 1-ին կետի կիրառման վերաբերյալ» թիվ ԱՐԱԴ/0381 որոշումը:
 33. ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի մարտի 12-ի «ՀՀ աշխատանքային օրենսգրքի 12-րդ, 170-րդ հոդվածների, «ՀՀ աշխատանքային օրենսգրքի գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի կիրառման վերաբերյալ» թիվ ԵԿԴ - 0360/02/09 որոշումը:
 34. ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2008թ. մայիսի 23-ի՝ «ՀՀ աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասի, 94-րդ հոդվածի 1-ին կետի, 109-րդ հոդվածի և Եվրոպական սոցիալական էսարտիայի 24-րդ հոդվածի 1-ին կետի կիրառման վերաբերյալ» թիվ 3-321 (ՎԴ) որոշումը:
 35. **Պետրոսյան Գ.Վ.: Հայաստանի Հանրապետության աշխատանքային իրավունք:** Ընդհանուր մաս (երկրորդ հրատարակություն/, ԵՊՀ.– Եր.: «Հայրապետ» հրատ., 2015:
 36. **Պետրոսյան Գ. Վ. Հայաստանի Հանրապետության աշխատանքային իրավունք:** Հատուկ մաս / 2-րդ հրատարակություն/, ԵՊՀ. – Եր.: «Հայրապետ» հրատ., 2015:
 37. **Պետրոսյան Գ. Վ.:** Աշխատողի և գորածատուի շահերի զուգակցումը ՀՀ Աշխատանքային օրենսգրքում: Իրավագիտության հարցեր: Երևան, 2007, N 1:
 38. **Պետրոսյան Գ.Վ.:** Ժամկետային աշխատանքային պայմանագրի իրա-

վական բնութագիրը (համեմատական վերլուծություն): Իրավագիտության հարցեր: Երևան, 2003, N 1:

39. **Власов А. А.** Трудовое право: конспект лекции. - 3-е изд., испр. и доп.. - М.: Издательство Юрайт; ИД Юрайт, 2010.
40. **Բլիշտեի Է. Ա.** Ի աճի՞ծ է ելի՞ծմի՞սն չա՞ նի՞ աբրա՞մի՞ն չա՞ ելի՞նի՞նն ա՞նձի՞նն ի՞նչն է՞նչն: Ի ., Եժ. Ի ին. օր-ն, 1982.
41. **Բաբայան Ն.Ա.** Ի ռուսի՞նն ի՞նչն է՞նչն ի՞նչն է՞նչն ի՞նչն է՞նչն ի՞նչն է՞նչն ի՞նչն է՞նչն: Ի ., Եժ. Ի ին. օր-ն, 1973.
42. **Նյուտոն Է.Ա.** Ի ռուսի՞նն ի՞նչն է՞նչն ի՞նչն է՞նչն ի՞նչն է՞նչն ի՞նչն է՞նչն: Ի ., Եժ. Ի ին. օր-ն, 1990.
43. **Смоленский М. Б.** Трудовое право Российской Федерации: Учебник. М.Б Смоленский. - 3-е изд., испр и перераб. - Ростов н/Д: Феникс, 2009.

Լրացուցիչ գրականություն

1. «Իրավահավասարության մասին Կոնվենցիան (սոցիալական ապահովության ոլորտում)» ընդունվել է 1962 թվականի հունիսի 22-ին, վավերացվել 2005 թվականի հոկտեմբերի 3-ին:
2. «Զբաղվածության մասին» ՀՀ օրենք (2013):
3. «ՀՀ Աշխատանքային օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենք (2004):
4. «Ամսական նվազագույն աշխատավարձի մասին» ՀՀ օրենք (2003).
5. ՀՀ Կառավարության 2007 թվականի փետրվարի 1-ի՝ «Առողջապահության, հոգաբարձության (խնամակալության), մանկական դաստիարակչական, էներգամատակարարման, գազամատակարարման, կապի և աշխատանքի այլ առանձնահատուկ բնույթ ունեցող բնագավառների աշխատողների աշխատանքի և հանգստի ռեժիմի առանձնահատկությունները սահմանելու մասին» թիվ 201-Ն որոշումը:
6. ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ: Ընդհանուր խմբ. **Գ. Զարությունյանի և Ա. Վաղարշյանի:** Եր., «Իրավունք», 2010:
7. Սովետական աշխատանքային իրավունք: Ղասագիրք **Ա.Ս. Պաշկովի և Օ.Վ. Սմիրնովի խմբ.**, (թարգմ. Ռ. Գուլբանյանի և Գ. Ղարախանյանի). - Եր.: Երևանի համալս. իրատ., 1988:
8. **Смоленский М. Б.** Трудовое право Российской Федерации. Учебник. - 3-е изд., испр и перераб. - Ростов н/Д: Феникс, 2009.
9. Комментарий к Трудовому кодексу РФ. Отв. ред. **Ю.П. Орловский.** - 5-е изд., испр., доп. и перераб. - М.: КОНТРАКТ, ИНФРА-М, 2009.